

ՏԱՅ ՍԿԱՆՈՒՏ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 13

I ՄԱՅԻՍ 1920

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԲՈՂԲՈՋՆԵՐԸ

ՄԱՅԻՍ 1 ինչ ոգևորիչ օր, ամէն ինչ զարթնումի շրջանին մէջ է, բնութիւնը իր ձիրքերը կը ափռէ ամէն կողմ եւ կենդանական աշխարհը իր օրհներգը կ'սկսի երգել . . .

Սկառուտական աշխարհի մէջ եւս եռուզերը, կեանքը սկսած է ամբողջ ազգերու մէջ Տօներ, ուրախութիւններ, ցուցահանդէսներ: Տարբեր աշխարհի մը, տարբեր ազգութիւնն են անոնք, սկառուտները: Թռչուններու եւ ծաղիկներու ընկերներ, ընտանի անասուններու բարեկամներ, ոգևորութեան, զուարթութեան եւ երգի առաքեալներն են . . .

ՄԱՅԻՍ ամիս. մեզի համար եւս ոգևորումի եւ հպարտութեան ամիս:

Ահա որբանոցներու դռները կը բացուին, նոր տունկեր կը բողբոջին այդ տխուր շէնքերուն մէջ. շարժումը, եռուզերը կ'սկսի այդ անձնողք ընտանիքի յարկերուն տակ, եւ մեր հասկերը պիտի ստուարանան նահատակներու այդ բեկորներով:

Երջանիկ կ'զգան անոնք ինքզինքնին այս նոր խմբաւորումի մէջ:

Ուրախութեան շողեր սկսան երեւիլ ստրկութենէ եւ չարչարանքէ դառնացած անոնց դէմքերուն վրայ. յոյսը սկսաւ փայլիլ անոնց աչքերուն մէջ:

Հայրենիքի արթուն պահակներն են անոնք. եւ մենք հրապարտ եւ ոգևորուած ենք անոնցմով:

Գուրգուրացէք անոնց վրայ . . .

Անոնք մեր աւեր հայրենիքին փողահարներն են եւ զարթնումի փողը կը հնչեցնեն:

ԶԱՐԹԻՐ նահատակ ծնողքներ, տեսէք ձեր արիւնէն ծլած բողբոջներն ենք անոնք, վաղուան հսկայ կաղնիներ ձեր արեւակէզ, անթաղ մասունքները հովանաւորելու համար:

ԶԱՐԹԻՐ հայ երկրի նոր ժողովուրդ, նոր երգ կ'երգուի այսօր բոլոր նոր որդիներուդ կողմէ:

Զարթի՛ր . . .

ՈՒԺՈՎ ԵՂԻՐ, ՏՂԱՍ




Մի՛ս ուժով եղիր, զա՛ս, մարմինդ ալ պահե՛ մի՛ս մահուր,
 Զօրեղ միտի մեջ հոգին անիի զօրեղ է յառէս.
 Մի՛սդ ու արիւնդ համերա՛շխ պահե՛ մի՛ս իրարու հետ,
 Մարմինդ ալ ուղիղ բռնե՛ մի՛ս՝ դէպի երկինք բարձրացուր:
 Մի՛տ տկո՛ւն եղիր, բայց երբե՛ք դաժան ոչ ալ երկչոտ,
 Մտածումներն ալ նահափդ շուրջ կազմե՛նք թող յուսապասակ,
 Երբեք դուն հոգիդ մի՛ փնացնե՛ր երազներու տակ,
 Մարմինդ ալ մ՛ընկներ վայելներու մեջ մեղկ ու վառաւոտ:
 Հպարտ, զգայուն ու փողոց եղիր՝ որքան զօրաւոր,
 Եղիր մի՛տ ազատ՝ սակայն ոչ մեկուն հասցուր դուն վնաս,
 Առանց նիգերու՝ արողջ պահե՛ մի՛տ մարմինդ բոլոր,
 Հաւասարակեօր, կայուն ու հաստատ եղիր դուն, զա՛ս:
 Թող ակնարկդ ըլլայ անկեղծ ու յսակ իր վառօրով անշեշ,
 Դեմքդ ալ թող բնաւ չստբապղծուի իր իսկալ փայլէն,
 Թող ձեռքդ ալ արողջ ըլլայ աննակա՛ն իր հպումին մեջ,
 Աւ ֆու հոգիդ լոկ ջինջ բուրմունքներ թող արտայայտեն:
 Այդպէսով բոլոր մարդկային կեանքի հարուածներն հուժկու,
 Որոնք շատ յանախ կ՛ընկնեն հոգիներն անգոր ու ոսին,
 Պիտի խորտակին ֆու վրայ՝ առանց քեզի յաղթելու,
 Ինչպէս այիքներ տար՝ կրանիք ժայռերուն առջին:
 Բայց ասոր համար, զա՛ս, պէ՛տ է որ մարմինդ համակ՝
 Եփուս ու զօրաւոր աշխատանքներու համար զինուի մի՛տ,
 Եւ վստահելի առաջնորդ մըն ալ՝ արժեքիդ գիտակ՝
 Քու ջանքերդ ուղղէ. ֆու. ֆայլերուդ ալ ընթացքներ տայ նիւզ:
 Քաջ մարդոց բրած մարգանքներն ամեն փորձե՛ կատարել,
 Միտերդն ասե՛ն վե՛ն ընթերցումներն ալ սիրէ դուն դեռ,
 Զօրեղ փայտ մ՛եղիր՝ բայց նաեւ բուսցուր վաղ ծողիկներ,
 Քանզի ֆու հոգիդ՝ շատ մեղմունքներ կարող է կրել:
 Արեւներու մեջ դուն ոսոխներէ չըլլայ՝ որ վայտնաս,
 Զողերու վրայէն մազլցե՛, ցակե՛ ամեն տապեղ:
 Մի՛տ ալ նայե՛ որ չարիքն սպաննես ֆու մեջդ, զա՛ս,
 Այդ կերպով միայն պիտի չընթանաս ցանկացածիդ պէս:
 Շեռն ալ ֆու ձայնիդ պիտի ըլլայ խոր ու մի՛տ առնացի,
 Սիրո՛ւ լեփեցուն յախտե՛նական փողոցութիւններով,
 Իսկ ետքիւնդ ալ՝ կատարել, անվախ ու անբեւա՛մի՛
 Պիտի գեղգեղէ՛ ներդաւնակութեան՝ Քայլերդն հոգերով . . . :

Թարգմանեց՝ ԱՅԻՐ.
 «մարմնամարզ»

ԼՏԳԱՐՏ ՄՕՆՕԻԷ




8'10" 2,400 2 104 0 103 3 143 8 40 0 10



ՄՐ. ՌՈՒԶՎԷԼԹԻ ԿԱՐԾԻՔԸ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՅՅ-ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



Նախկին «Մարմնամարզ» թերթէն արտատպելով, մեր ընթերցողներուն ուշադրութեանը կը յանձնենք Մր. ՌՈՒԶՎԷԼԹԻ այն կարեւոր տեսութիւնը, Պիտի խնդրենք մեր ընթերցողներէն որ իրենց բարեկամներուն ալ թելադրեն կարգալ այս գրութիւնը:

Մանաւորապէս մեր պետական և պաշտօնական շրջանակներու անհատներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք. համաշխարային այս մեծ մարդուն այն տեսութեանը վրայ, և կը փափաքենք որ հայ մասուլ արտատպէ զայն:

Բոլորովին համամիտ եմ դատաւոր լինուելին, երբ կ'ըսէ թէ Պոյ-Սկաուտական շարժումը ամենամեծ կարեւորութիւն ունի ամբողջ երկրին և ազգին համար. անիկա արդէն մեծ օգտակարութիւն մատուցած է, և պիտի շարունակէ այդ ուղղութեամբ գործել, որովհետեւ իր ծրագիրը առաջնորդուած է շատ գործնական օգիտ մը. որուն շնորհիւ ձեռք պիտի բերուի բարոյական դաստիարակութեան ամենակատարեալ ստիճանը, հաւասար ուժերով պայքարելու կարողութիւնը եւ ուրիշներու համոզուելու պահանջներու միասնակցութիւնը ունենալու առաջին քայլերը: Քաջութիւնը եւ պարկեշտութիւնը այնպիսի ձեռով մը կ'ուսացուի տղայոց. որուն նմանը չկայ և եւ չկայ, որ և եւ ձեռի սակ ցարդ չի յայտնուած իրագործուիլ, ինչի համար մասնաւոր նշանակութիւն ունի Թիլիպեան կղզիներէն Սկաուտ պետի մը նամակին մէկ մասը, որ կ'ըսէ. «անտարա կոյս ձեզի համար շահեկան պիտի ըլլար գիտնալ թէ Մանիլայի վերջին հրդեհին, որ ատեն մղոններով հողեր այրեցան և 3000 հոգի անտուն մնացին, Մանիլայի Սկաուտներէն երկու խումբեր հրդեհին վայրը հասան հրդեհ խումբերուն հետ միասին և շատ դժնդակ պայմաններուն քեր, գրեթէ չորս մամ անընդամ կերպով օգնեցին չիթած թնիկներ մխիթարելու և առաջնորդելու ազահով վայրեր, միեւնոյն ատեն ազատելով և փոխադրելով անոնց գոյքերը և կարասիները գրեթէ բոցերու մէջ կորսուած բնակարաններէն. անոնք իրենց կատարած գործին գիտակից գոհունակութեամբ մը ըրին այս ամէնը և տեղական մատուցը յանուն մողովուրդին, զիրենք շնորհաւորեց և շնորհակալութիւն յատնեց: «Վերջին Բարեկենդանի հանդէսներուն, կողմակերպիչները Սկաուտներու օժանդակու-

թիւնը խնդրեցին և ամբողջ տասը օր անոնք ամէն տեսակ ծառայութիւն մատուցին հանդէսներուն համար սահմանուած գեղանկերուն վերայ. անոնք օտարականները պանդոկ կամ այլուր առաջնորդեցին, և իբր առաջնորդ և այն օգտակար հանդիսացան հարիւրէ աւելի պարագաներու մէջ:»

Ինչ որ Թիլիպեան կղզիներու Սկաուտները ըրին, կը կարծեմ թէ մեր իրաքանչիւր քաղաքի և գիւղի Սկաուտները յօժար և կարող պիտի ըլլային ընելու: Այս շարժումը հայրենասիրական և պարկեշտ շարժում մ'է. անիկա նպատակ չունի Սկաուտներէն զինուորներ պատրաստելու. նպատակ ունի պատրաստելու երիտասարդներ որոնք իր մարդ, կարող ֆաղափսցիներ պիտի ըլլան, եւ երբ հայրենիք իրենց պիտի ունենայ, պիտի փութան իր շարժումը զինուորներ անոր ծառայելու, որովհետեւ շատ սկաուտներ եղած են: Եւ ոչ մէկը կրնայ լաւ Ամերիկացի մը ըլլալ, առանց լաւ քաղաքացի մը եղած ըլլալու, և իւրաքանչիւր տղայ պարտաւոր է ինքզինքը այնպէս մը կրթել և պատրաստել որ իբր մարդ կարողանայ հանրութեան հանդէպ իր վրայ ինկած պարտականութիւնը լիով կատարել: Ես կը բազմամ տեսնել Պոյ-Սկաուտներուն ոչ միայն զեղեցիկ զգացումներ արտայայտելու, այլ զեղեցիկ եւ օգտակար գործեր կատարելու, չի բաւեր միայն երգել և լսել թէ «Հայրենիք, քեզի համար է» այլ անհրաժեշտ է աշխատել այնպիսի ուղղութեամբ մը, որով հայրենիքը մեծնայ և այդպիսի հայրենիք մը ունենալիս մեզի փառք համարենք և անով հպարտանանք աշխարհի առջեւ: Այլ մեկ մարդ շատ ֆաղափսցի մ'է, առանց գործադրել աշխատելու Սկաուտական Տասնարանեան եւ անոր Ռակեդեկե կանոնները իր արողը կեանքին գործունեութեան համար ուղեցոյց մը ընտրելու. անտարակոյս որ ըսել չեմ ուզեր թէ պէտք է անոր պատուէրները գործադրել մասնաւոր պարագաներու մէջ միայն, այլ ինչ որ կուզեմ երեսն հանել, այն իրողութիւն է թէ այդ Տասնարանեայ Պատուէրները պէտք է պատշաճեցնել առօրեայ կեանքի սովորական գործերուն: Վստահ եմ թէ Պոյ-Սկաուտները պիտի սիրեն ճշմարտութիւնը և դիմացիներուն հանդէպ յարգանք պիտի տածեն. անոնք պիտի վարժուին ձեռք բերելու քաջութիւն և պարկեշտութիւն, այնպէս որ երբ իբր երիտասարդ քաղաքացիներ սկսին իրենց անհատական գործերէն դուրս հանրային գործերով ալ զբաղիլ, և հանրութիւնը կառավարել կարող ըլլան:



Հայ Սկաուտները Պոլսէն որբերը իզմիտի Որբանոցը փոխադրելով տեղաւորելէ վերջ,
Իզմիտի ծովածոցին առջեւ:

գործնական կերպով ալ ցոյց տան Վեհ(Ս.ՓԱՌ) ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ վրայ իրենց ունեցած յարմար վ-տահու թիւնը, ոչ միայն անհատական յարաբերութիւններու մէջ, այլ անհատներու և էջառավարութեան միջև, որուն իրենք մաս կը կ-սզմեն: Արդարեւ տղաք նոյն իսկ իրենց փոքր սարիֆին կրնան շատ մեծ ազդեցութիւն մը ունենայ հանրութեան՝ տարեց անդամներուն վարիին և ապրելակերպին վրայ, որովհետեւ ազնուութիւնը և ուղղամտութիւնը մոռուրեան և ապակասութեան նման վարակիչ են:

Ամէն առողջ տղայ պարտաւոր է զգայ և պիտի զգայ թէ բան մը արժեւոր, մարդ նկատուելու համար, ունենալու է ոչ միայն քանդելու, այլ՝ և մանաւանդ, ստեղծագործող բնոյթ մը, եթէ ան կարողանայ իր՝ զգացումը իր ստատիճանական ածուրթին հետ պահել և զարգացնել, անիկա առած պիտի ըլլայ զէպի լաւ քաղաքացիութեան իր առաջին և ամենազլխաւոր քայլը:

Սակայն, բացի ապագային քաղաքացի մը ըլլալու համար իր թափած ջանքերէն, տղան նոյն իսկ ներկային մէջ մեծ շահով օգտակար կրնայ ըլլալ. ու այս բանը կարելի է միայն այն պատեան, երբ ան ուրիշ տղայոց հետ կը միանայ և անոնց կը գործակցի: Պոյ-Սկաուտները թող նկատի ունենան թէ իրենց քաղաքին կամ գիւղին հանրային պարտէզները և խաղավայրերը այդ գործին մեծապէս կը յարմարին: Բնական արգելքներ կրնան խաղավայր մը անյաճախելի վիճակի մը վերածած ըլլալ, և եթէ շրջակայի

Պոյ-Սկաուտները տեսնեն որ այդ տեղերը իրենց գործին յարմար են, ցոյց պիտի տան թէ իրենք այդ արգելքները կրնան և գիտեն վերցնել և հանրութեան հոնգիստին և առողջութեան նրպաստել: Կը կարծեմ թէ, բացի ասկէ, տղայոց ուսուցումը քիչ քիչ քերտու զլխաւորներէն մին պէտք է ըլլայ նաև կուսիլ վանտարականութեան դէմ. քող անոնց համար պատուոյ խնդիր մը ըլլայ պաշտպանել քոչուները, ծաղիկները և ծառերը, այսպէսով երկիրը վերածելով գեղեցիկ բնակավայրի մը:

Այն նոյն յատկութիւնները որոնք ազգի մը ամբողջութեան համար յաջողութիւն կամ անկում կը նշանակեն, նմանապէս տղու մը և մարդու մը համար ալ անհատապէս յաջողութիւն կամ անկում առաջ կը բերեն:

Պոյ-Սկաուտները պէտք է կուսին այն նոյն թշնամիներուն և մոլութիւններուն դէմ, որոնք ազգին ամբողջութեան այնքան կը վնասեն. անոնք պարտին աշխատել իրենց մեջ անհասապիս զարգացնելու այն ստատիկութիւնները՝ որոնց ազգը մեծապէս պիտի ունի ազնուամտութիւն և զօրակալութիւն համար: Ետայ, լքեալ, կամ անխնամ ըլլալը տղան պիտի վերածէ ինկամ վիճակի մէջ գաւառուող մարդու մը, որուն պէտքերը ազգի մը մէջ յառաջ կը բերեն այդ ազգին կորուստը: Տղան թող հաստատուն քայլերով կանգուն կենայ իր ներքին և արտաքին թշնամիներուն դէմ. թող ան քաջութիւն ցոյց տայ անվախ կերպով անոնց մէկ մասը զիմաչրելու և միս-

ՅԱՌԱԶԻԿԱՅ ԱՄՈՒՆ

ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ՍԵՆՈՒՏԱԿԱՆ "ԺԱՄՊՈՐԸ,"

(7 Ապրիլ 30 Յուլիս 1920)

ԱՆԳԼԻԱ

Այս միջոցիս աշխարհիս բոլոր սկաուտները մեծ գործունեութեամբ մէջ կը գտնուին, մասնաւորաբար միջին և հիւսիսային եւրոպայի համաձայնական և չեզոք երկիրներու մեր սկաուտ եղբայրները մեծ խանդավառութեամբ մարզանքներ կ'ընեն, մինչ ուրիշ մաս մը անոնցմէ սկաուտներու հաւաքավայրին մէջ ձեռական աշխատութեամբ կը պարապին, որովհետեւ Զօրավար Պատըն Բաուլի կազմակերպած «Ժամ պոր»ին մաս կը կ'ազմէ ձեռական աշխատութեանց մրցումներ եւս:

Հիմակուրէն արդէն կարելի է ըսել թէ եթէ 1919 տարւոյ ամառը խաղաղութեան հաստատան տարի մը եղաւ, անոր յաջորդող 920ի ամառը անկասկած սկաուտական ամառ մը պիտի ըլլայ, և այս տարեշրջանով Զօր. Պատըն Բաուլ նոր փայլուն շրջան մը պիտի բանայ համաշխարհին սկաուտական կեանքի մէջ:

Այսպէս, այս ամառ Էոնտոնի մէջ կազմակերպուած է սկաուտական համաշխարհային տն մը, որուն պիտի մասնակցին Եւրոպայի, Ա.Մ. Բրիկայի և նոյն իսկ Ասիական սկաուտական կազմակերպութեանց ներկայացուցիչներ. որոնց թիւը ըստ հրատարակուած ծրագրին, 156 սկաուտէ աւելի չի կրնար ըլլալ: Այս հանդէսով սկաուտները խաղաղութեան առթիւ իրենց ըզգացած ուրախութիւնը տօնելով պիտի կատարեն և ինչ որ աւելի հիանալի է դիւանագիտական աշխարհին չի կարողացած կատարելիք միջազգային եղբայրակցութիւնը աշխարհի բոլոր սկաուտները պիտի կրնան իրագործել: Հիւսիսային ամերիկայի հնդիկներուն նման որոնք կ'երևի թէ աւանդական կերպով տարեկան հանդէսներ կը սարքէին հոն, եղբայրաբար քանի մը օր իրարու քով ապրելու և ըստ իրենց այս հանդէսներուն անունով, Զօր. Պատըն Բաուլ ևս այս հանդէսներուն ժամպօր անունը կուտայ:

Նախ քան «Ժամպօր»ին մասին տեղեկութիւններ գրելը տեսնենք թէ ինչ կ'ըսէ Զօր. Պատըն Բաուլ աշխարհի բոլոր սկաուտներուն իր ուզած կոչովը:

ներք զսպելու և ճգմելու համար: Ու և է տղայ բան մը շարժեր, եթէ ուժ (չունի) իր ներքին փորձիչ մղումներուն դէմ կուռելու և քաջութիւնը ուղիղ և մաքուր ճամբուն վրայ կենարու: Իրեն համար հպարտութեան խնդիր պէտք է ըլլայ այն գիտակցութիւնը թէ ինք ու է մէկէն չի վախնար, և թէ ինք բան մը չի խրնայի որ ինչնրու հանդէպ ազնիւ և նկատալից ըլլալու, մասնաւորապէս անոնց հանդէպ որոնք իրմէ տկար են: Եթէ ան իր մօրը եւ ֆյուրուրն հետ շաւ չի վարուիր, ան խեղճ արարած մ'ե միայն, հոգ չի քե ասկի դուրս ուրիշ շաւ քաներ կարենայ կասարեղ կամ կասարած ըլլալ, ճիշդ այն մարդուն նման, որ իր կինը կը քանակոծէ. ունի ուրիշ շատ օգտակար յատկութիւններ և սակայն ան խեղճ ու ստորին քաղաքացի մը միայն կրնայ նկատուիլ:

Պէտք չէ առիթը փախցնել տղուն սորվեցընելու համար թէ քաղաքավարութիւնը, լու վարուելակերպը և ազնուութիւնը անհրաժեշտ բաներ են օգտակար ըլլալ ուզող մէկու մը համար. անոնք փոքր ձեւակերպութիւններ չեն, որովհետեւ կեանքի ամէն մէկ դարձումը մէջ անոնց պէտքը կ'զգանք: Թո՛ղ տղան յիշէ թէ բացի քաջութենէ, անշահանդութենէ և լու վերաբերումէ, ան պարտաւոր է ունենալ վրձնականութիւն և ընդարձակ ծանօթութիւններ. ան պարտաւոր է մշակել զօրաւոր մարմին մը և ուժեղ միտք մը ու ինքզինքը այնպէս մը պատրաստել, որ պահանջուած ատեն շուտափոյթ որոշումով մը ազատի ներկայացած դժուարութենէն: Միտք, աչք, միակողմէ, ամենքն ալ պէտք է զարգանան այնպէս մը որ տղան կարենայ ինքզինքը կռաւարել և հետեւաբար սորվիլ իր ճակատագիրը առաջնորդել և ոչ թէ անկէ առաջնորդուիլ. ամենալուազոյն մաղթանքներս միշտ Պօյ-Սկաուտական շարժումին և Պօյ-Սկաուտներուն հետ պիտի ըլլայ:

ՌՌՌՌՌՌՌՌ
(Նախկին նախագահ Ամերիկայի)



Խմբագրական

«Կը յուսամ թէ պիտի յաջողիմ հաւսքել ըստ սկաուտական խումբերու ներկայացուցիչները կատարուելիք մեծ ցոյցին որ պիտի անուանենք Հիւսիսային Ամերիկայի հնդիկներու նման «Ժամ պօր» մը :

Կը փափաքիմ կալմակերպել այս ցոյցը իբր միակ միջոց արտայայտելու համար այն կարեւորութիւնը զոր կուտանք խաղաղութեան հաստատման առթիւ, որուն իրականացման այն քան աշխատեցաւ աշխարհիս բոլոր հին և նոր սկաուտները, և միւս կողմէ իրականացնելու ստորև առաջադրած նպատակները :

Այս առթիւ աջակցութիւնը կը պահանջեմ բոլոր ընդհանուր խմբագրութեան, խմբագրութեան «Ժամպօր»ը աննախընթաց յաջողութեամբ պատկերու համար որ պիտի կարենայ համաշխարհային սկաուտներուն նոր զարկ մը տալու :

«Ժամպօր»ին նպատակն է :

- 1. — Ամէն խումբերու նոր ուժ մը տալ :
- 2. — Արմատական կերպով հասկցնել մեր նըպատակը և մէթոտները դաստիարակներուն, ծնողաց, կրօնաւորներուն, և հանրութեան :
- 3. — Խմբագրութեան նոր թեկնածուներ և նորագիրներ գտնել :
- 4. — Օտար սկաուտները մեզ հետ աւելի շփման մէջ դնել :
- 5. — Տարածել և հաստատել մեր կազմակերպութիւնը բազմամարդ քաղաքներու մէջ ուր բարոյական և ֆիզիքական կրթութեան պակասը զգալի դարձած է :

Հիմայ կարգանք ծրագիրը :

Առաջին մասը կը կազմէ մինչև տասներու ժամ տարեկան սկաուտներու միջև մրցումներ և ներկայացումներ, որոնց կրնան մասնակցիլ նորագիր սկաուտները երդուեալ սկաուտները, հին սկաուտները և ծովային սկաուտները : Այս մրցումով պիտի որոշուի աշխարհիս սկաուտական «չամբիոն»ն, որուն կրնան մասնակցիլ խումբ խումբ ամէն երկրի սկաուտները, որոնց նուազագոյն թիւ 24 և առաւելագոյնը 150 որոշուած է : Ներկայացումները յաջորդաբար պիտի կատարուի մարզավայրին մրջավարը, ամէն մէկ խումբ մէկ քառորդ ժամ կրնայ երկարել իր ներկայացումը : Ամէնէն անակնկալ ներկայացումը ներկայացնող խումբին առատորէն կէտեր պիտի տրուին : Պիտի աշխատուի որ կրկնութիւններ

տեղի չունենան : Ներկայացման նիւթը կրնայ կազմել, կառախումբերու բաղխումբին առթիւ կատարուելիք օգնութիւններ, օգնաւորդի անկման օգնութիւն, ողողումի, երկրաչարժի խրատչած ձիւ օգնութիւններ : Ֆիզիքական փորձեր, սկաուտներու կողմէ շինուած սայլերու կամ կառքերու ցուցադրում և անոնցով ներկայացումներ, տնակներու շինում, կրակ վառել : Այս զանազան փորձերը իրարու խառնելով կարելի է խիստ հետաքրքրաշարժ տեսարաններ պարզել :

Ամէն կողմէ 12 սկաուտով պարան քաշել : Երեք սկաուտէ կազմած խումբով արգելներու վրայ խմբական վազք : Մարաթոնեան վազք, մարզավայրին մէջ :

Զեռական աշխատութեանց մրցում, մետաղով շինութիւն, կօշկակարութիւն, կահագործութիւն կամ ատաղձագործութիւն, խոհանոցի գործեր և պարտիզամշակութիւն :

Երաժշտական փողերու, թելով գործիքներու սկաուտներու միջև խմբական մրցում :

Իսկ Բ. խումբին կրնան մասնակցիլ առանց տարիքի խարութեան ամէն սկաուտները, մըրցումը անհատական է, մրցանակներ պիտի տրուին ամէնէն լաւ կերպով գործող շօքչարժ գործիքին, իւրով շարժող գործիքին, ջրաղացքին և այլն և այլն : Իրենց երկրին ամէնէն լաւ նամակադրոշմի հաւաքածոն ներկայացնողին, «Ժամպօր»ը իմացնող ամէն լաւ ազգին :

Իսկ Գ. բոլոր խումբը կը կայանայ, սկաուտական ոգիին մեծութիւնը ցոյց տուող զանազան ներկայացումներէ : Զրօսայի ֆիզիքական մարզանքներու ներկայացում, սկաուտական երգչախումբ կամ նուագախումբ, և սիրուն կենդանիներու մրցում : Կը յուսացուի որ ամէն խումբ իրեն հետ պիտի բերէ կենդանի մը Օլիմպիայի դաշտը, որոնցմէ ամէնէն հետաքրքրաշարժը մրցումի կը դրուի : Կենդանիներուն կերակրումը և պատասխարանը ապահովուած է Օլիմպիայի մէջ, որուն «սկաուտներուն կենդանաբանական պարտէզ» անունը տրուած է :

Դ. նորագիրներու, սկաուտներու և ծովային սկաուտներու ներկայացում, որոնք պիտի շարուին իրենց ձեռքերուն մէջ ճիւղեր բռնած :

Այս տեղեկութիւններէն վերջ նայինք թէ ինչ ձեւով կազմակերպուած է այս մեծ տօնին յայտագիրը, որ պիտի տեսէ 7 Ապրիլէն 30 Յուլիս :

Յուլիս 25էն միջև նոյն ամսուն վերջը Օլիմպիայի դաշտը զանազան փորձեր պիտի կա-



Յրաեսայի մէջ «Յիւսիմ սօր» Միութեան անդամուհիները բացօդայի կը պարեն (վայտի ձեւ մը)

Պարը օգտակար է, չենք ուրանար այս քանը, շարժումը կեանք է՝ երբ պատշաճութեան և չափաւորութեան սահմանին մէջ ըլլայ, իսկ մեր պարասրահները միջրոպի և ապականած օդի ամբարներ են և պարողներն ալ մտլուցքէ տարուած լողացողներ անօր մէջ. խնայեցէ՛ք բարեկամներ ձեր թոքերուն և ձեր զգացումներուն և ելէ՛ք բաց դաշտերը հոն լողնալու արեւուն ճառագայթներուն մէջ և խմելու մաքուր օդը և ծաղիկներու բայրերը: Հեռացէ՛ք մեղկութեան այդ բոյներէն, պարասրահներէն:

տարուին, իսկ Յուլիս ամսոյն վերջնիցեր օրը պիտի ըլլայ մամուլի օր և սկառուտները հագուստներով փորձեր պիտի կատարեն: Յուլիս 31ին «Ժամագործ» պիտի բացուի ժողովուրդին առջև: Նոյն օրը ժամը 11էն 14ը 30 անցած, մարզավայրին մէջ նախնական մրցումներ տեղի պիտի ունենան: Ամէն կողմ ցոյցեր պիտի կատարուին և թատրոններուն մէջ սինէժայով սկառուտներու մասին ներկայացումներ պիտի արուին: Նոյն օրը ժամը 14ը 30էն մինչև 17, մարզավայրի մէջ աշխարհի բոլոր սկառուտներու խումբերու մասնակցութեամբ մեծ տօնք, որոնք պիտի առաջնորդեն 500 անդամէ բաղկացած Լոնտոնի երգչախումբը: Ասոր պիտի յաջորդէ ծովային սկառուտներու կողմէ՛ մարզանքներ, սկսովտիական պարեր: Հրդեհի դէմ կռուելու, վրան կանգնելու, սկառուտական շամբիօնային և առաջին խումբին մրցումները, որոնց մանրամասնութիւնը տուինք վերև: Ժամը 18-19ը առտուան ծրագրին կրկնումը: Օգոստոսի 19ին առաջին օրը կրօնական արարութիւններ մարզավայրին մէջ, նոյն օրը ժամը 19ին գիշերային կրօնական արարողութիւններ: Օգոստոս 2 և յաջորդ օրերը սոյն ծրագրին կրկնումը. ժողովուրդային հոծ բազմութեան, այս տօններուն մասնակցիլը կարելի չբարձնելու համար. այս միջոցին համաշխարհային սկառուտներու երաժշտական խումբերուն միջև կա-

տարուած մրցումին մասնակցող նուագախումբը պիտի նուագէ ամբողջ օրը:
Քաղաքներու մէջ առաւօտեան կանուխ կամ գիշերը արեւամուտին տեսնուած այս միեւնոյն հագուստը կրող պզտիկ սկառուտները ոչ միայն այս տօնական օրերուն մէջ տարի մը ամբողջ սինէժայի ժապուէներու վրայ մեղ պիտի ներկայանան, քանի որ այս մրցումները սինէժայի առնելու համար արդէն մեծ ընկերութիւններ իրարու հետ կը մրցին, նաև Լոնտոն պիտի հրաւիրուին թագակիր գլուխներ, հանրապետական նախագահներ, թագուհիներ, պետական մարդիկ, բարձրաստիճան գինուորականներ, արուեստագէտներ վերջապէս աշխարհիս ամէնէն մտաւորական մարդիկ պիտի շրջապատեն 20րդ դարուն այս նոր առաքեալները, որոնք արդէն համաշխարհային եղբայրութեան երազը մօտ օրէն պիտի իրականացնեն, բան մը որ մեծերը չի կրցան ընել: Այս առթիւ անկասկած մենք հայ սկառուտներս կրնանք մեր հիացումը արտայայտել մեր անգլիացի սկառուտ եղբայրներուն և իրենց պատուական խմբագրատին Զօր. Պատէն Բաուլի, մաղթելով որ իր յառաջիկային կատարելիք նոր «Ժամագործ» կարենանք մասնակցիլ մենք եւս, ազատուած այլևս մեզ կաշկանդող անիծապարտ ուժերէն:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Ամերիկայի պոյ սկաուտները փետրվար 8էն 14, տօնեցին իրենց 10րդ տարեշրջանը: Այս առթիւ կազմակերպեցին սկաուտական հանդէս մը: Իրենց կէս միլիոնի հասնող թիւով կոչ ըրին ամերիկեան բոլոր քաղաքացիներուն իրենց ազգային հանդէսին մասնակցելու: Այսպէս չարաթ մը բոլոր թերթերը, բոլոր հաւաքովայրերը ամբողջ Արիւսցեալ նահանգներուն մէջ սկաուտներու այս առիթն մասնակցեցան մեծ խանդավառութեամբ:

Ահաւասիկ այս աննախընթաց շաբաթօրէն ծրագիրը:

8 Փետր. կիրակի. — Տարեդարձի օր. — Առանց յարանուանական խտրութեան սկաուտական ազօթք կարգացուիլ բոլոր եկեղեցիներու մէջ սկաուտներու կողմէ: Բոլոր հանդիսականներէն կը խնդրուի նորագիր սչաուտի մը արձանագրութեան պատճառ ըլլալ: Ժամը 2 ը քառորդ անցած բոլոր սկաուտները կրկին իրենց երգումը պիտի ընեն:

9 փետր. երկուշաբթի. — Նորագիրներու օր. — Ծրագիրներու բաշխում. — Նոր նորագիրներու կոչ: Ոչ մէկ աղայ պէտք է մոռցուի: Բոքբակնտի մեծ հաւաքումներ:

10 փետր. երեքշաբթի. — Ընկերական օր. — Ամերիկայի սկաուտները այսօր օտարներով կը զբաղին ցուցնելու համար թէ սկաուտը ճարտարեկամ է ամէնուն հետ:

11 Փետր. երեքշաբթի. — Հայրերու օր. — Հայրերին մասին մտածել ամբողջ օրը: Իրիկունը հայրերուն սրտց հետ միասին ճաշասեղոն:

12 փետր. հինգշաբթի. — Հայրենիքի օր. — Սկաուտը այսօր զինուորով և նաւագով կը զբաղի: Զինուորականներու յատուկ հանդէսներ: Հայրենասիրական հանդէսներ:

13 փետր. ուրբաք. Մայրերու օր. — Ամէն սկաուտ ցորեկուան ճաշը կ'եփէ և իրեն մօր կ'սպասարկէ: Տունին մէջ օր և է բանի մը նորոգութիւն և կամ փոփոխում սկաուտին կողմէ:

14 փետր. շաբաք. — Ընկերակիցի օր. — Ամէն մարդ հրաւիրուած է զբոսայի հանդէսներու, խաղեր, մրցումներ կը կատարուին:

Գիշերը. — Ամէն սկաուտ իր տունը:

Պ Ե Լ Ծ Ի Գ Ա

Պելճիգայի սկաուտները սկսան հրատարակել իրենց օրկանը l'Eclairer. իր ծրագիրն է «Աշխատիլ միացնելու սկաուտական զանազան

խումբերը և միութիւն հաստատել բոլոր ընկերակցութեանց միջեւ:» Ահա՛ իր նշանաբանը. «Plus de division». մաղթենք որ ոչ միայն Պելճիգայի սկաուտներուն մէջ, այլ բոլոր աշխարհի սկաուտներուն միջեւ սերտ կապակցութիւն մը հաստատուի: Այն հանդէսը ֆրանսական «l'Eclairer unioniste» հանդէսին նման կ'սկսի հրատարակել pictographie սկզբունքները, որոնք մօտ ապագայի մէջ պիտի կազմեն սկաուտներու միջազգային լեզուն: Պելճիգայի սկաուտները մետաղ մը պիտի նուիրէին սկաուտներու միջազգային զեկս վար Զարգար Պատըն Բասլի, որուն հանդիսաւոր յանձնումը կատարուեցաւ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Թրանսվայի սկաուտները սկսած են հրատարակել «The Reveille» շատ սիրուն սկաուտական հանդէսը, որով մեզ կը ցուցնեն թէ այս երկրին մէջ սկաուտական հոսանքը օր ըստ օր է կ'ուժեղնայ: Զմբան եղանակին ի նպաստ խումբերուն ամէն տեղ հանդէսներ սարքուած են: Սկաուտները վիրաւոր զինուորներու ցաւերը ամոքել կը ջանան, մասնակցելով անոնց դաշտային աշխատութեանց և նամանաւանդ մասնակցելով անոնց համար զիւղեր կազմելու հանգանակութեան:

Հ Ո Լ Ա Ն Տ Ա

Սկաուտական հոսանքը սկսած է 1911ին, շնորհիւ անգլիական սչաուտներու Հոլանտա աշցելութեան: Հոլանտացի խմբագրութեան մը կը գրէ. «Սկաուտական հոսանքը մեզ ազատեց փողոցի շարածճիւղերէն, որոնք երբ ընելու բան մը չի գտնեն վտանգ մը կը դատնան ժողովուրդին»: Ի խան մը կը հովանաւորէ այս կազմակերպութիւնը»

Բ Ո Լ Ո Ն Ի Ա

Mercur de France հետեւեալ ստղերը կը գրէ.

«Ամբողջ Բոլոնիոյ մէջ չորս օր, սկաուտները հաւաքեցին զինուորներու ձմրան ներքին հագուստեղէններ: Այս նպատակով Բոլոնիոյ մեծ գրողներու կողմէ կոչեր հրատարակուեցան թերթերու մէջ: Անոնցմէ Զէրովսքի իր կարգը վերջացնէ սա կերպով. «Զինուորներու իբր պատգամաւոր, սկաուտ, դարկ հարուստին դուռը: Զարկ ինչպէս պիտի ընէիր վտանգի

ՖՈՒԹԳՈՒԻ ՕՐԷՆՔՆԵՐ

մը պահուն, մի՛ խնդրեք այլ պահանջէ հայրե-
շիքի անունով: Աճրողջ ու ժողով անունը աչքե-
րուն մէջը նայէ, քու ու մեզ նայաւ ամբողջ ա-
նունց սիրահերը անգամ կընայ յո՛ւզի:»

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի «Բենիօնիօթ» սկստաններու
ընդհ. խորագրեալ կոչով մը կը հրատարակ իր
կազմակերպութեան բոլոր սկստանները մաս-
նակցելու 15 յուլիսէն մինչև 3 օգոստոս սկա-
ռտական շինող շարքերուն: Այսպէս խումբերը
պիտի դրկուին ամօքելու համար գերմանական
քանդու մները: Մասնաւորաբար կը հրատար-
ուին զանազան ճիւղերու համար վրայեալ սկա-
ռտներ: Այս թուականին միջոցին, կարելի է
միայն 15 օր աշխատիլ, նշատի առնելով զանա-
զան սկստաններու զբաղումները: Այսպէս ի-
րենց հայրենակիցներուն կակիծները կ'ամօքեն
Ֆրանսայի սկստանները:

Գարձեալ «Բենիօնիօթ» սկստաններու կեդ-
րոնական մարմինը հաստատած է իր սկստա-
ններուն յատուկ ազարակ-դպրոց մը: Այսպէս
հոն կարելի պիտի ըլլայ տրվիլ սկստանին
պարտականութիւնները, գիւղական աշխատու-
թիւններ և միւս կողմէ պիտի կարենայ Ֆրան-
սայի սկստանը հանգարտ կերպով իբրև ճըշ-
մարիտ սկստան ապրիլ որոշ յիշան մը, քանի
որ քաղաքի կեանքը ստէպ արգելք կ'ըլլայ այս
բողձալի սկստական կեանքին:

Պայմաններն են՝ նուազագոյն 13 տարեկան
ըլլալ, վեց ամիսէ ի վեր պատկանիլ «Բենիօ-
նիօթ» շարքերուն, Բ կարգի սկստան ըլլալ,
Սկստաններու ազարակ-դպրոցի բիւջէին կողմէ
վկայագիր ունենալ ընդունուելու համար:

Շրջանը 3 ամիս է, Ինչ որ աւելի ձեռու-
քըքրական է առաջին տարուան համար և
սամբարն է 15 ֆրնք. Բ. տարուայ 25 ֆրնք.,
Իսկ Գ. տարին սկստանը չի վճալ կէ զատ կ'օշ-
տուի ազարակին հասոյթէն:

ՄԱՐՍԻԼԻԱ ՊԻՄԷՆ


Պ. ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱՔԵԱՆ
ՕՐ. ԱՆՆԵՔ ԵՆԱՔԵԱՆ
ՆՇՈՆՈՒԱՆ

Պեպէխ, 18 Ապրիլ 920 Բանկայրի

Հ. Մ. Ը. Մ. Միտեթիւնը և խմբագրութիւնը իր շր-
նորանորութիւնները կը յայտնէ իր համակրելի անդա-
մին և աշխատակցին, և իր այս նոր արշաւին մէջ ևն
յաջողութիւն կը մտայնէ:

1918—19ի շրջանին Army and Navy athletic associa-
tionի գրկուած են շատ մը հարցումներ foot boll և bas-
ket hollի մասին, որոնցմէ հետեւեալները միշտ վիճա-
քանութեանց և երբեմն կռիւի պատճառ կ'ըլլան մրցում-
ներու ժամանակ:

- Ֆուտբոլի հարցումներ.
 1. Հ.—Ի՞նչ է վաւերացուած չափը գնդակի մը:
 - Պ.—Գնդակ մը կրնայ ըլլալ մինչև 27 ինչկս փոքր և 28 ինչկսն ոչ աւելի մեծ:
 2. Հ.—Եթէ խումբ մը պակաս տղաքներով խաղի սկսի, կրնայ խաղին ժամանակ ներս առնել ժաջած-
ները:
 - Պ.—Ոչ:
 3. Հ.—Որչափ մօտ կրնայ դէմ կենալ տղայ մը դիմա-
ցէն քաշող հեկէի մը:
 - Պ.—10 եարթաէն մօտ չկրնար կենալ:
 4. Հ.—Երբ կօլէ մը քաշուած գնդակ մը հովին ազդե-
ցութեամբը դայ կրկին կօլին մէջ կ'ընայ ի՞նչ
կը հաշուուի:
 - Պ.—Corner kick:
 5. Հ.—Չեւ քով գնդակ նետելու ժամանակ տղայ մը
կրնայ ոտքին մատներուն վրայ կենալ:
 - Պ.—Այո, եթէ երկու ոտքին մատներն ալ գծին վրայ
են:
 6. Հ.—Ովսայց կը հաշուուի եթէ խաղացող մը ովսայց
կեցած ըլլայ բայց գնդակին չըդպի:
 - Պ.—Այո
 7. Հ.—Խաղացող մը ֆօրներ քաշած ժամանակ կրնայ
ֆօրներէ դուրսը հանել գնդակը տեղը լաւ յար-
մարցնելու համար:
 - Պ.—Ոչ, խաղը սկսելէ վերջ դուրսը մը բնաւ տեղէն
պէտք չէ շարժի. եթէ նոյն իսկ սխալ դուրս
է:
 8. Հ.—Կօլքիբըր մը քանի դայ գնդակը հետը կրնայ
առնել:
 - Պ.—2 քայլէն աւելի չկրնար:
 9. Հ.—Կօլ քիբըր մը քանի դայ գնդակը հետը կրնայ
տանիլ, փոխն ի փոխ ձեռքէն գետին զարնելով:
 - Պ.—Որքան որ ուզէ, պայմանաւ որ րեկնդիի գծէն
դուրս չըլլէ:
 10. Հ.—Ի՞նչ է պատիժը եթէ կօլիբըր մը երկու քայլէն
աւելի ձեռքին մէջ կրէ գնդակը:
 - Պ.—Հարուած մը, տասերկու քայլէն աւելի չըլլալու
պայմանով (րեկնդի):
 11. Հ.—Խաղի մը մէջ կրնայ կօլիբըր մը ուրիշ խաղա-
ցողի մը հետ փոխուիլ:
 - Պ.—Այո, դատաւորին ըսելէ վերջ:
 12. Հ.—Խաղացող մը կրնայ երկաթեայ կօշիկ գործածել:
 - Պ.—Ոչ:
 13. Հ.—Դատաւոր մը կրնայ տղայ մը վռնտել, առանց
դայն առաջուընէ ազդարարած ըլլալու:
 - Պ.—Այո, գէշ վարմունքին համար:
 14. Հ.—Բեկնդիի ժամանակ կօլիբըր մը կրնայ իր կօլի
գիծէն քայլ մը առաջ գալ:
 - Պ.—Ոչ, պէտք է ճիշդ գծին վրայ կենայ:
 15. Հ.—Բեկնդիի քաշող տղան կրնայ կրկնել իր հար-
ուածը եթէ իր քաշած գնդակը ուղղակի երթայ
զարնուի կօլ բօսի և իրեն վերադառնայ:
 - Պ.—Ոչ, բայց եթէ կօլիբըրը ետ գարնէ գնդակը,
այն ժամանակ րեկնդիի քաշող տղան իրաւունք
կ'ունենայ ներս քաշելու:



ՍԵԱՌՏՆԵՐԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՇՈՅԻՆ ՄԻՋ

Հետեւեալ նամակը դրկուած է Ամերիկայի սկաուտներու պետին կողմէ Իզմիրի հայ սկաուտներու պետին Պ. Մ. Յանըզեանի:

**Ազնիւ Նախագահ
Հայ Պոյ Սկաուտներու
Կազմակերպութեան
Իզմիր**

Միրելի Պարոն,

Մեծ հաճոյքով է որ ստացանք Մր. Արթիւր Նիւմընի միջոցաւ ձեր գրած Նամակը, որով ձեր կազմակերպութեան յարգանքները կը մատուցանէիք Ամերիկացի Պոյ-Սկաուտներուն, իսկ ալ փոխադարձաբար սոյն գրութեամբս 490,000 Ամերիկացի Սկաուտներու յարգանքներուն արտայայտիչը կ'ըլլամ ձեզ:

Ամերիկեան ժողովուրդը ընդ առաջ կ'երթայ միշտ

հայկական բաղձանքներուն, մասնաւորապէս այն պատճառաւ որ եր'տասարդութիւնը ենթարկուած է զարհուրելի տառապանքներու եւ հալածանքներու:

Մենք կը յուսանք եւ մանաւանդ կը հաւատանք որ Հաշտութեան Բարձրագոյն Խորհուրդը ձեր յոյսը իրականութեան կը փոխէ, վերջ մը գնելով Հայաստանի տառապանքներուն:

Մենք շատ կը հետաբրբրուինք ձեր կազմակերպութիւնով եւ մեծ հաճոյք կ'զգանք ձեզ գործնականապէս օգնելով

Ձեզ կը դրկեմ Պոյ Սկաուտներու շարժման վերաբերեալ զանազան գրքեր:

Մաս 920

Անկեղծօրէն Ձերդ
ՃէՅՄՍ Է. ՌԻԷՍԹ
Ներկայացուցիչ Ամերիկայի
Սկաուտներու կազմակերպութեան



ՍԿԱՌԻՏԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆՈՒՆԵՐՈՒ

Գննդան արանութիւնը երբ իս վրայ գտնուող էակնե-
րու նկարագրութիւնը կամ բնական պատճութիւնն է,
Գննդան արանութեան հեղինակները բոլոր անասունները
բաժնած են խմբերու, դասերու, կարգերու, ցեղերու
եւ այլն, որպէս զի ամոնց ուսումը աւելի դիւրին եւ ա-
ւելի արդիւնաւոր ըլլայ:

Սոյն դասակարգութիւնը կ'ը կայանայ Լակներու
հանգամանքը այսինքն կենդանի էակներու միջեւ զի տ
նուելիք նմանութիւնները ճանչալու վրայ:

Երբ անասունները նկատի առնուին միայն մարդոց
ըրած ծառայութիւններու տեսակէտով, այն ատեն կը
բաժնուին ՅԳՏԱԿԱՐ Եւ ՎՆԱՅԱԿԱՐ խմբերու:

Երբ անասունները իրենց բնական տեղերուն համե
մատ նկատի առնուին, կը բաժնուին ԸՆՏԱՆԻ Եւ ԱՉԱՏ
դասերու:

Ընտանի են այն անասունները որ կը բնակին մար-
դոց հետ, կը հնազանդին մարդոց եւ իրենց սնունդը ու
խնամքը մարդոցմէ կ'ընդունին:

Ազատ կ'ըսուին այն անասունները որ բնականաբար
երկրիս վրայ կ'ապրին իրենց իրենց հայթայթած ապաս-
տարաններէն զատ ապաստարան չունենալով:

Եթէ նկատի առնենք անասուններուն մարդոց մա-
տուցած թէ օգնութիւններն եւ թէ ծառայութիւնները եւ
իրենց զանազան ապրելակերպը, կրնանք զանոնք չորս
դասի բաժնել:

(1) Բուն իսկ ընտանի անասուններ կամ աշխատա-
ւորներ:

(2) Երկրորդական ընտանի անասուններ կամ հատու-
թաբեղներ:

(3) Բուն իսկ ազատ անասուններ:

(4) Վայրի անասուններ:

Առաջին երկու դասի անասուններն են միայն օգտա-
կար եւ հիւանդները, որոնք զրնթէ ամէնքն ալ ընտանի
տեսակներու կը պատկանին:

Երկրորդ եւ չորրորդ դասի անասունները կը բաղկա-
նան միայն ազատ եւ աննուաճներէ որոնց մէջ կան
օգտակարներ եւ վնասակարներ:

Սոյն չորս դասի անասունները յաջորդաբար մեր ու-
սումնասիրութեան առարկայ պիտի ըլլան:



Սկաուտները բնութեան ծոցին մէջ

Վայրի ձին: Ասոնց առաջին ութը հատը մեր երկրին մէջ
կ'ապրին, եւ մնացածները մեզի օտար են:

Դուք ալ զիտէք տղաք, թէ սոյն անասունները
մարդուն ծառայութիւններ կը մատուցանեն, զոր ամէն
օր կը տեսնէք: Բայց միայն ծառայութիւններ կ'ընեն ը-
տելը բաւական չէ, պէտք է անդրադառնալ անոնց կա-
րեւորութեան վրայ: Ինքզինքնիդ սոյն խորհրդածութեանց
տալով պիտի յանգիք վարուիլ անպայման այն շահեկան
արարածներուն հետ ըստ ձեր պարտաւորութեան:

Վարը, համառօտակի, պիտի պարզենք վերոյիշեալ
անասուններուն մարդոց հանդէպ օգտակարութիւնը:

1. — Եունը որ անասուններէն ամենէն կատար-
եալն է մարդուն իբր ընկեր կը ծառայէ, անոր տան եւ
հօտերուն պահպանութիւն կ'ընէ, եւ զարմանալի բան
մարդուն կեանքը կ'ազատէ հազար տեսակ պարագանե-
րու մէջ:

Շան տեսողութիւնը՝ գերազանց, հոտառութիւնը՝
սուր, եւ լսողութիւնը՝ շատ նուրբ է: Շունը ուժեղ, ե-
ռանդուն, թեթեւազամ ըլլալով հանդերձ սրտի բոլոր
յատկութիւնները ունի, իր ուշիմութիւնով, անձնուիրու-
թիւնով, հաւատարմութիւնով, անշահասիրութիւնով,
արթնութիւնով, ժուժկալութիւնով եւ իր գուրգուրանքին
մէջ ունեցած յարատեւութիւնով հուշակ հանած է:

Սոյն հոշակը, որուն արժանացած է իրաւամբ, կը
կապէ զինք օգտակարապէս մարդուն որուն հպատակած
է զարեղէ ի վեր:

ԲՈՒՆ ԻՍԿ ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

ԿԱՄ ԱՆՆԱՏԱՒՈՐՆԵՐ

Բուն իսկ ընտանի անասունները կամ աշխատաւոր-
ները այն անասուններն են զորս մարդը խելօք եւ հեզ
ըրած է, որոնք մարդուն հիւ եւ անտրտունջ ծառա-
ներն են անոր շատ մը աշխատութիւններուն մէջ,
կապուած են մարդուն, անոր հետ կը բնակին եւ անկէ
կ'ընդունին իրենց ամէն տեսակ խնամքները:

Սոյն դասու կենդանիներն են շունը, կատու, եզր,
կովը, ձին, հըր, չորին, գոմէշը, եզնածին (չափ), յապոն
եւսն եղջերուն, ուղոր, օսիկ ուղոր, յաման, վիզունամ կամ
ուղասամային, այրախան, փիղը, կիսկը, վագերածին եւ

Շունը երբէք չի ձգեր այն տէրը որուն կապուած է. անոր հետ կը տանի համբերութեամբ ամեն տեսակ զըրկանքներ, յոգնութիւններ, անբարեխառնութիւններ եւ վտանգներ քան ուրիշ տեղ փնտռել լաւագոյն մեռնող մը եւ դարման մը. Այս պատճառով յաճախ կը տեսնուի տիրոջ գերեզմանին վրայ ցառով եւ յուսահատութիւնով մտնելը, իր սիրելին գտնելու համար անսահման տարածութիւններ կտրել անցնելով ամենամեծ արգելքներով յողթելը եւ ամեն վտանգ ոտքի տակ առնելը.

Ամեն տարի շուները եւրոպայի մէջ շատերուն կեանքը կ'ազատեն. զօր օրինակ, կը տեսնես որ շուն մը ջուրը ինկած տղայ կամ ողողումէ յափշտակուած տարուած դժբաղդներ եզերք կը հանէ. ուրիշ մը՝ բոցերու մէջ եզող բնակարանէն իր տէրը դուրս կը քաշէ. ուրիշ մըն ալ՝ միւսին մէջ կորսուած ճամբորդներ քնակեալ վայր մը կ'առաջնորդէ. մէկ ուրիշ մըն ալ՝ վառեցաւոր անասուն մը կը սատկեցնէ կամ իր տիրոջ վրայ յարձակող մարդասպանին դէմ քաջարար կը մաշառի.

Մարդ էր պիտոյրին կամ յմահացոյրին համար շան շատ տեսակները յառաջ բերած է, ուզուած է գանազան ծառայութիւններու յարմար շուներ հարցնել.

Յաշորով պիտի ցուցնենք շունին զվատոր տեսակները.

(Շար) **ՏՔ ՄԻՆԱՍ ԱԽՅԻՍԵԱՆ**
(Անասնաբոյժ գնդապետ)

ՄԱՐԶԱՇԻԱՐԶ

Սան Սրէնանցի մեջ
4 Ապրիլ 920

ՄԱՔՐԻԳԻԻՂ-ՍԱՄԱԹԻԱ մրցումին արդիւնքն է, Մաքրիգիւղ յարթական 2 ԿՕԼՈՎ 0 Կ ԴԷՄ. (Մարմամասնութիւնները նախորդ թիւին մէջ).

ԿՕԼՈՎ ԵՒՆՈՒ - ԿՅՏԸԻԻԻՂ.

Ե Ի

ՀՕՅ ԿՂԶԻ ՍԵՒՏՈՒՐ

11 Ապրիլ 920

Որը սկստուներու ի նպատակօք բաժնելու պատճառաւով մասնաճիւղերը գրադած ըլլալով յատկապէս ցան այս մրցումները.

Թալիմհանէի մեջ:

Կ. ՄԱՔՐԻԳԻԻԻՂ-ՎՈՍԲՈՒՐ

13 Ապրիլ 920

Խաղը բաւական եռանդուն անցաւ հակառակ Վոսբորի մասնաճիւղի կարող անդամներուն մէկ քանին բացակայութեան շատ ոգիւր խաղացին.

Խաղը վերջացաւ Վոսբորի յաղթանակով Յի դէմ 2 կօլով.

ՍԵՒՏՈՒՐ-ՍԱՄԱԹԻԱ.

Շարաթ երեկոյ վերջին ժամուն խմանալով որ հետեւեալ օր Սկիւտարի Հ. Մ. Ը. Մ. Ի ԹԿՆԻՍԻ դաշտին բացման հանդէսը պիտի կատարուի ստիպուեցանք Սամաթիոյ յետաձգել տալ. Թէեւ օրինաւոր չէր Սկիւտարի այս ընթացքը եւ հակառակ էր Արօթթաճէնի ոգիին. Իսկ Սամաթիա պէտք էր դաշտը գար եւ պաշտօնական մեակերպութիւնը կատարելէ վերջ յողթական ետ դառնար.

Հ. Մ. Ը. Մ. Ի ԿԵՂՐ.
Քարտուղարուրիւն

Թալիմհանէի հրապարակ

25 Ապրիլ 920

Զ. ՀՕՅ ԿՂԶԻ-ԿՈՒ ՄԳՈՐՈՒՐ

Գումգարուի քանի մը անդամներուն ուշանալուն պատճառով երկու խումբերու խմբապետներուն հաւանութեամբ խաղը փոխանակ 10ին, 10,30ին սկսաւ. Խումբերը 1Ի ԴԷՄ 1 ԿՕԼՈՎ հաւատար մնացին. Խաղին ընթացքին խաղացողները եռանդուն էին եւ կանոնաւոր.

Բացի երկու հոգիէ որոնք միշտ կը խօսէին, միւս բոլորը լաւ տպաւորութիւն թողուցին.

Քարտուղար
ԵՂՈՒՄԵՂ ԻՍԶՈՍՏՈՒՐԵԱՆ

Է. ԱՆԲԱ-ՇԻՇԼԻ ԵՒ ՍԱՄԱԹԻԱ.

25 Ապրիլ 920

Բերա-Շիշլիի խումբը կէսօրէ վերջ անգլիական Բօլթի Սօյ Ֆիւզիլքա ֆութպօլի խումբին հետ մրցում ունենալով յետաձգուած է այս խաղը. Սամաթիա լուր չուներալով այս կարգադրութենէն ժամանակին խաղավայրը գալով պաշտօնական մեակերպութիւնը կատարած եւ կօլ հաշուելով վերադարձած է.

Ժամը երեքուկէսին տեղի ունեցաւ վերոյիշեալ Անգլիացիներու հետ մրցումը երկու հազարի չափ հանդիսատեսներու ներկայութեամբ. Հետաքրքրութիւնը ծայրաստիճան էր, իսկ մրցողները բարձր ոգեւորութեամբ եւ եռանդով կը խաղային, խաղէն աւելի կենսական գործի մը երեւոյթը առած էր գաշտը.

Հպարտութեամբ կը շնորհաւորենք մեր տղաքը որ գիտցան պէտք եղած չքութիւնը տալ խաղին իրենց դէմի մրցողներուն հաւատար, որոնք լաւ կը գլխային թէ գործերնին բաւական վարժ խումբի մը հետ է.

Դիտողութիւն մը. մեր տղոցմէ քանի մը հոգի միշտ կը խօսէին իրարու հետ եւ քիչ ժը ոչ փափկանկատ ծնուով. երկրորդ, Գ Զ. . . իր պաշտօնէն դուրս ուզեցաւ զարնել որ պէքին իրաւունքն էր որ լաւ տպաւորութիւն չը թողուց ներկաներուն վրայ, նոյնպէս ուրիշներ իրենց տեղերը փոխելու ապօրինութիւններ կ'ընէին.

Բեքթրիին հիմներու քիմաշիններու օվաջաններու պտեն մը քանի անշամ չը սուշելովը մեր տղաքը այս կողմնակցութեան երեսէն վնասուեցան եւ հակառակորդները երկու կօլ ըրին.

Խաղը վերջացաւ Անգլիացիներու յաղթանակով 1Ի դէմ 3 կօլով.

ԱԹԼԷԹԻԿ ՄՐՅՈՒՄՆԵՐ — Անգլիոյ Օքսֆորտ և Գէմպրիճ համալսարաններու միջև աթլէթիկ մրցումներ կատարուած են հետեւեալ արդիւնքներով —

100 եարտա վազք՝ 10 երկ. : 120 եարտա արգել սրչաւ 16 վր. ³/₆ երկ. : 402 մէթր վազք՝ 41 ⁴/₆ երկ. : 804 մէթր վազք՝ 1 վր. 57 երկ. : Մէկ մղոն՝ 4 վր. 27 ³/₆ երկ. : 3 մղոն 14 վր. 45 ³/₆ երկ. : Երկայնութիւն ցուկեղ. մէկ քաղ.՝ 6.53 մէթր : Բարձրութիւն՝ 1.74 մէթր : Գունկ ճեղք՝ 12.71 մէթր : Քար ճեղք՝ 31 50 մէթր : Օքսֆորտ զժուարու կրցաւ յաղթել Գէմպրիճի :

* Իտալիոյ Միլան քաղաքին մէջ Անվերսի միջազգային Ողիմպիական մրցումներու պատրաստութեան համար մեծ գործունէութիւն մը կայ. տանք Իտալացի լաւագոյն աթլէթներու անունները, իրենց շափանիչովը :

Օրլանտո՝ 100 մէթրոյի մէջ 11 ¹/₁₀ երկ. : Բէրքո՝ 800 մէթրոյի մէջ, 2 վր. 2. երկ. : Սրէրօնի՝ 5 մղոնի մէջ, 25 վր. 13 երկ. : Բէսթուրա՝ նիզակ նետել, 43.78 մէթր (Իտալիոյ չափանիչը) : Թիւկնօլի՝ սկաւառակի մէջ 41.70 մէթր :

* Մարտ 28ին Բարիզի 8500 մէթր հեռա որութեան մը վրայ մեծ դաշտային վազքի մրցում մը տեղի ունեցաւ, 7:8 մրցորդներու մասնակցութեամբ : պ. Կասթօն առաջինը հանդիսացաւ, նոյն հեռաորութիւնը 29 վր. 36 երկվրկէն կարելով :

* Ապրիլ 3ին Լոնտոնէն Պրայմըն (83 քիլոմէթր) քաղելու մրցում մը տեղի ունեցած է : Առաջինը եկած է նշանաւոր քաղող՝ Ռոս, 8 ժամ, 15 վր. 58 երկ.էն : Զրդ. Զորթլըն՝ 8 ժամ 35 վր. :

* Այդատի մէջ յաղալու մրցումներ տեղի ունեցած են : 100 մէթր՝ 1 վր. 21 երկ.էն 200 մէթր՝ 3 վր. 2 երկ.էն : Մաղթենք որ Վանայ լիճի մէջ կատարելիք մեր ապագայ մրցումները լաւագոյն արդիւնքներ տան, ու մնեալ ծովու մէջ կատարուելիք միջազգային մրցումներու մէջ մեր առաջնութիւնը կարենանք ապահովել . . .

ՅՈՒԹՊՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ — Պէրնի մէջ Չուիցերիոյ և Իտալիոյ մէջ և 15000 հանդիսականներու ներկայութեամբ Ֆութպօլի մրցում մը կատարուեցաւ : Չուիցերիա Օի դէմ 3 կօլով յաղթական ելաւ :

* Անգլիոյ մէջ Էսթըն Վիլա և Չէլզիա խումբերու միջև 45000 հանդիսականներու ? ներկայութեամբ մրցում մը տեղի ունեցաւ. վերջի խումբը 1ի դէմ 3 կօլով յաղթական հանդիսացաւ :

* Անգլիոյ մէջ «Տիւրգօնիլնս» և «Նայթս


Բէնճրաս կոչուած կոյր Ֆութպօլիստներու միջև Ֆութպօլի պատմութեան էջերուն մէջ չը տեսնուած հետաքրքրաշարժ մրցում մը տեսնեցաւ : Հարկ կայ աւելցնելու թէ՛ հանդիսականներուն մեծամասնութիւնը կոյրերը կը կազմէին, որոնք իրենց խաւարին մէջէն թերևս իրերը կը տեսնէին և կը դատէին մեզ նախանձի ենթարկելու եղանակաւ մը :

Մրցումը սապէս կատարուեցաւ : Կօլը մէկ հաս մըն էր. իբր կօլ գիրը բերուած էր Չէլզիա Ֆութպօլի խումբի համբաւաւոր բերդապահը, որ Անգլիոյ լաւագոյն խաղացողներուն շուրթեհն շատ քիչ անգամներ պարտուած է : Հակառակ իրենց տաղանդին, կոյրերը կէս ժամուան ընթացքին 8 կօլ կրցին ընել : Սաղը ունէր իր սովորական հաշտարարը, որ իր սուլիչով թէ խաղացողները կը ղեկաւարէր և թէ յուզման և խանդաժառման կը մատնէր . . . կոյր հանդիսատեսները : Երկու կողմէն 6 ական հոգի կը խաղային : Գնդակը կօլէն 14 եարտա հեռա որութեան մը վրայ կը զետեղուէր. քներչքի զիզի նման կոյրերը կը շարուէին, յետոյ յարձակող կողմէն խաղացող մը սուլիչին ձայնը լսելուն պէս զնդակին կը զարնէր : Այսպէս յաջորդաբար իւրաքանչիւր կողմի 6 խաղացողները երկուքական անգամ զատ զատ զարկին : 15 վայրկ. վերջ հաճախը լրացաւ :

Մրցումը տեւեց 30 վայրկեան : «Նայթս Բէնճրաս»ները 3 ի դէմ 5 կօլով յաղթական ելան : Չարնուած հարուածներէն շատեր՝ անկարելի եղաւ բռնել :

Այս մրցման ամենահետաքրքրական գերը կը կատարէին կոյրզկուրոյն հանդիսականները, որոնք մեծ աղմուկներով բաղդաւոր . . . յուսաւորեալներէ մրցան մասին տեղեկութիւններ կը հարցնէին ու երբ իրենց համակիր կողմը կը շահէր, ուրախութեան ցոյցերով օդը կը թնդացընէին : Այսպէս ուրիշներու աշխարհին մէջ կոյրերն ալ կ'ունենան իրենց հոգեկան և մարմնական հաճոյքները, իսկ մեր աշխարհին մէջ՝ միայն Եկտի-Գուլէի դարմանատան մէջ կրնանք վայելի մեր աննման կեանքին - շղթայակապ հաճոյքները :

* Լոնտոնի չրջանակին մէջ միայն շարաթական 8000 Ֆութպօլի մրցումներ տեղի կ'ունենան եղբր : Եթէ այդ մրցումներուն ներկայ եղող հանդիսատեսներու թիւը 5000 նկատենք, ամէնքս ալ մեր փոքր թուարանագիտութեամբ կրնանք հետեցնել թէ՛ շաքաթը 40 միլիոն անգլիացիներ իրենց ժամանակը կ'սպաննեն ! Ֆուդպօլը դիտելով : Եւ խորհիլ թէ՛ Անգլիոյ մէջ եթէ որ և է՞ պատճառաւ հաղորդակցութեան գիծերու մէջ յապաղում մը պատահի, զուսուողը իրաւունք ունի դատարան դիմելով, իր կորսնցուցած վայրկեաններուն փոխարժէքը պահանջելու ! Այս խաղասէրները դատարկապորտ-



Բերայի Էսայեան Որբանոցի որսերը անձանօթ բարերարի մը կողմէ հազցուելով աշխարհապաշտական տողանցներն՝

ներ կարելի չէ նկատել, որովհետեւ անոնց մէջ կան աշխարհիս բազմը վճարող մեծ մարդիկներ՝ նախարարներ, երեսփոխաններ, վաճառականներ և ոչ... տիրացու սրտախառն մասնաւոր թղթակիցներ:

Այժմ տեսնենք թէ՛ այս մրցումները ինչ բարոյական և գործնական օգտակարութիւն մը ունին Անդրիոյ համար: Նախ, կարճ հասակով մարդիկ շատ բարձրերը ելլել ուզելով, քիթերնին ամէն բանի մէջ չեն մտններ, այսինքն՝ ոչ կղերական հարցերով և ոչ ալ քաղաքական... բարդ խնդիրներով կ'զբաղին, այլ՝ ամէն գործ իրենց յատուկ մարմիններուն յանձնելէ վերջ, կ'երթան դաշտի մը անկիւնը ու մէկ քանի կոշ աւելի ընելու համար քրտնաթոր պայքար կը մղեն ու ժամերով, օրերով կը վիճարանին խաղի և ոչ թէ... ապրելու իրենց անհասկնալի պայքարին վրայ:

Յետոյ՝ 40 միլիոն ժողովուրդ զիրար բամբասելով իրարու տուն քանդելու տեղ, իրարու կը մտնան անձանօթ անկիւններ ու զիրար չկամթող նիւթերով կ'զբաղին ու կը բարեկամանան: Մինչ մենք երկու հոգի երբ քով քովի կուգանք, մեր մտքին և լեզուին մասններուն ոյժը փորձելու կ'ելլանք, ու միշտ կը պօրտուինք մեր... ձեռքի և ոտքի անյաղթ մասններուն առջեւ:

Հիմա ենթադրենք թէ ափ մը Հայերս ալ ունենայինք նոյն համեմատութեամբ 100 շաբաթական մրցումներ, Յետոյ, սրճարաններու... կանաչ սեղաններուն առջեւ իրենց տաղանդին վրայ մարտը և... փառող գիւտանազէտները այդ տեղերը հաւաքուէին, երկու թերթ աւելի ծախելու համար մեր միտքին և երեւակայութեան թելերը յաւիտենական անդամալուծութեան մը դատապարտելու հերսական ճիգեր թափող սպառնական խմբագիրները գոնէ... օգտուներու, արեւնին մաքրելու համար դաշտերը կ'ընկնէր ելլէին՝ ամէն մարդ պիտի ունենար իր ժամանցի աղբիւրը, որով ծարաւնալուծն պէս պիտի դի-

մէր հոն(1), և չպիտի դրաղէր ուրիշներու վրատաճած հարցերով և պարտականութիւններով:

Այսպէս, մեր վարչազէտները, խօսելու նիւթի սովէն բռնադատելու ազդային կենսական գաղտնիքները հրապարակելու տեղ, ուղղակի դաշտ կ'ելլէին ու հոն մեր համակրելի ֆոյդալիստներու խաղերը լուրջ վիճարանութեան աւարիտ կը դարձնէին, այսպէսով ազգը փրկելով... հոստոսութիւններէ:

Լո՛ճանայով, ցաւինք մեր նստակիտաց և թուլամորթ բնաւորութեան վրայ, ու փնտրենք ատոր դարմանը: Հրապարակային հասարակներ, բարեկամական մերձեցումներ մեզ իրար ճանչցնելու, իրար սիրցնելու կրնան ծառայել:

* * * ՅԻՄԱՆԱԿԱՆ Օրօ մարմնամարզական օրաթերթը տարօրինակ մրցում մը բացած է. «Ինքնաշարժերը 500 տարի վերջը, այսինքն՝ 2420 թուականին ինչ վիճակ պիտի ունենան»: Մրցման մասնակցողները պարտաւոր են գծագրութեամբ պարզել իրենց գուշակութիւնները...: Իրականութենէ աւելի շինծուութեան՝ մտտեցող յաջողագոյն լուծողին ոսկի մէտալլ մը պիտի տրուի, որուն վրայ հաւանաբար սկարուած պիտի ըլլայ անանիս ու թեւաւոր... Ինքնաշարժ մը: Մենք հոս վաղուան գլխերնիս գաղիքը չենք գիտեր, նոյնիսկ գիտնալու փորձ մը բնելու չափ խելք չունինք, ինչպէ՞ս 500 տարի վերջը ըլլալիքներուն խելք կրնան հասցնել այս նորելու... մարգարէները: Աւելի օգտակար գործ մը կատարած չպիտի ըլլային անոնք, եթէ հարցնէին իրարու թէ մարդկութեան անունով գործուած ոճիրներուն վերջը ո՛ւր պիտի յանգէր:

Վ. Ս. ՓԱՓԵՋՆԱՆ

(1) Նոյնպէս շատ խելացի բան կ'ընէին մեր դերասաններն ալ եթէ ֆութպոլի և դաշտային խաղերու ժամանակ յատկացնէին որ չտուխուլէին ժամանակէն առաջ բնակ լքելու և ողբերգելու որ ժողովուրդը չը գնահատեր վիրենք:

*. Պէլճիքական օդանաւ մը 5 Մարտին, Պրիւքսէլի վրայ թռիչք կատարելով, քաղաքին վրայ նետած է հազարաւոր կանանչ և կապոյտ գոյնով տետրակներ և «Le Boy Scout» թերթէն, սկաուտական բրօշականա ընելու համար: Երջանիկ երկիր:

ԶԱՒԷՆ

Ոսկով աշխարհի շրջանը. — Քուէնա անուն աշխարհաշրջիկ մը որ գլխաբաց և ոտաբոսիկ վիճակի մէջ 40,000 քիլոմէթր քայելու գրաւ գրած է, Իզմիր հասաւ: 1919 Օգոստոս 1ին ուրիշ երկու մրցակիցներու հետ Պրէսթէն ճամբայ ելած ըլլալով պէտք է որ 1922 Դեկտեմբեր 1ին վերադարձած ըլլայ իր մեկնակէտը: Այդ պինդ քարոզը արդէն իսկ անցած է 7220 քիլոմէթր անդ: Յաջորդաբար պիտի այցելէ Իտալիա, Յունաստան Սպանիա, Փորթուկալ, Պէլճիքա և Հոլանտա: Այս արտակարգ աշխարհաշրջիկը որ իր անձնական ծախքով կը ճամբորդէ, եթէ յաջողի, 80,000 ֆրանք պիտի շահի զոր պիտի տայ Պրէսթի թերթ մը:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ


Հ. Մ. Ը. Մ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵՆԵՆ

920 Ապրիլ 11 Զատիկ օրը, Գոլոսյ ամբողջ թաղերու մէջ տեղի ունեցաւ որբերու սկաուտական հալուստներու ի նպատակ քօքարի բաշում: Մեր սկաուտները կանուխէն զօրծի սկսած էին եւ հակառակ եկեղեցիներու փակ ըլլալուն ժողովուրդը լաւ վերաբերուեցաւ եւ առատօրէն վարձատրեց:

Այս առթիւ Հորճակալութեան պարտք ունինք մեր պաշտօնակից մամուլին եւս:



Սկաուտները Զատիկ օր քօքարտ հաւաքելու տեսն:



Բաժնուած քօքարտներուն նկարը

ԲԸՆԸՍԱՆՍԻՆ, որ նահաճեռնարկ եղաւ խմբազրականով մը նուիրատութեան ցանկ մը բանալու:

Ֆրանսերէն ՊՕՍՅՕՐԻ Յունարէն ԲՐՕԻԱ եւ ՆԷՕԼՈՂՈՍ թերթերուն:

Մեր յոյն հայրենակիցները շատ լաւ վերաբերում մը ցոյց տուին այս նպատակի հանդէպ: Գատըգիւղի յոյն սկաուտները անձամբ մասնակցեցան քօքարտ բաժնելու գործին:

Շատ յուզիչ էր յոյն թաղի յոյն արհեստաւորի մը այն շարժումը որ, ազդուելով նպատակին գեղեցկութենէն իր զրպանք ունեցած ամբողջ դրամը գանձանակն էր ձգած: Նոյնպէս մեր Հորճակալութիւնը հայ մամուլին որ իրենց էջերը բարեացակամօրէն տրամադրեցին մեզի: Եւ այն ամբողջ ազգային մայմիններուն որ ո եւ է կերպով աջակցեցան մեզի:

Զուտ հասոյթը եղած է (4000) չորս հազար սակի որ կը մնայ Ազգ. Խնամատարութեան մօտ եւ անմիջապէս պիտի ձեռնարկուի հազուատներու հայթայթումին:

*. Անցած կիրակի 18 Ապրիլին Սկիւտարի մէջ տեղի ունեցաւ Թէնիսի դաշտին բացումը ի ներկայութեան երկսեռ բազմութեան որուն նկարը կուտանք յաջորդ թիւով:

Պատրիկ Հ. Մ. Ը. Մ. Մասնաճիւղը 18 Ապրիլ կիրակի օր թաղին Խորնեան վարժարանի սրահին մէջ ներկայացում մը, սրահը լեցուն էր: Խաղը յաջող անցաւ որու միջոցին սկաուտական ոգին հակիրճ կերպով ներկաներուն բացատրեց Գեղը: Վարչութեան ներկայացուցիչը, Հասոյթը 40 սակի եղած է:

ԵՐԳԱՆ ԱՐԱՒՈՂՈՒԹԻՒՆ

25 Ապրիլ 920

Առաջին բացօթեայ երգման արարողութիւնը տեղի ունեցաւ Բերա Շիշլի Մասնաճիւղի մտքաբանի, Բանկալթիի գերեզմանատան մէջ:

Գարնամային աղօթք մը կար կոկիկ բազմութիւն մը շրջապատած էր բերայի սկաուտներու խումբը, որոնց միացած էին ետայեան վարժարանի որք սկաուտները, տեսարանը շատ յուզիչ էր, ժամը 10 30ին սկսաւ երգման արարողութիւնը որմէ վերջը բանաստուծութիւնն էր եղան:

Նոյն օր խմբապետի աստիճան տրուեցաւ Պ. Արայ Տօմինեանի ու ուրիշ սկաուտներու ալ տասնապետի աստիճաններ տրուեցան:

Արարողութիւնը վերջացաւ սկաուտական գեղեցիկ տողանցքով մը: